



«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 02.04.2013թ.-ի թիվ 18 որոշմամբ
Խորհրդի նախագահ Վ. Գաբրիելյան

(ստորագրություն)

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային)» դասի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. **Ապահովագրող**՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
- 2.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած անձ
- 2.3. **Պայմանագիր**՝ սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր
- 2.4. **Շահառու**՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, ով ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ ունի գույքային շահ
- 2.5. **Ավտոտրանսպորտային միջոց**՝ Պայմանագրում նշված՝ ճանապարհային ոստիկանությունում գրանցված և ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ, բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոց (ներառյալ՝ թեթև մարդատար ավտոմոբիլներ, ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմոբիլներ, մոտոցիկլետներ, քարշակներ, տրոլեյբուսներ և այլն), որի օգտագործումը վերոհիշյալ նպատակներով թույլատրված է Հայաստանի Հանրապետության տարածքում
- 2.6. **Լիազորված տիրապետող**՝ Պայմանագրում Ապահովադրի կողմից նշված անձ, ով ունի Ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք, ում կողմից Ավտոտրանսպորտային միջոցը վարելու (օգտագործելու, շահագործելու) հետևանքով առաջացած դեպքը Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով հանդիսանում է Ապահովագրական պատահար
- 2.7. **Լրացուցիչ սարքավորում**՝ Ավտոտրանսպորտային միջոցի գործարանային արտադրությամբ չնախատեսված սարքավորում կամ համակարգ, որը մշտապես տեղադրված է Ավտոտրանսպորտային միջոցում (օրինակ՝ ձայնա-, տեսա- և (կամ) հաղորդակցման համակարգ, ոչ գործարանային անվասկավառակ, ոչ գործարանային տեղադրության գազի համակարգ և այլն): Լրացուցիչ սարքավորման ապահովագրության դեպքում Ավտոտրանսպորտային միջոց սահմանումն իր մեջ ներառում է նաև տվյալ Լրացուցիչ սարքավորումը:
- 2.8. **Ապահովագրական արժեք**՝ Պայմանագրի կնքման պահին Ավտոտրանսպորտային միջոցի՝ ՀՀ-ում գործող շուկայական (իրական) արժեք
- 2.9. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ
- 2.10. **Ապահովագրական սակագին**՝ Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ տոկոսային արտահայտությամբ



- 2.11. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար
- 2.12. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալը կրում է հավանական, անսպասելի և (կամ) պատահական բնույթ, որի տեղի ունենալու պարագայում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել ապահովագրական հատուցում
- 2.13. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.
 - 2.13.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
 - 2.13.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց անկախ վնասի և կորստի չափից:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

- 3.1. Ապահովագրության օբյեկտն Ապահովադրի (Շահառուի)՝ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերն են՝ կապված Ավտոտրանսպորտային միջոցի տնօրինման, տիրապետման և/կամ շահագործման հետ:
- 3.2. Սույն Պայմանների համաձայն կարող է ապահովագրվել այն Ավտոտրանսպորտային միջոցը, որն ըստ ՀՀ օրենսդրության կարող է օգտագործվել/շահագործվել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներում և որի նկատմամբ Ապահովադրի մոտ առկա է գույքային շահ:
- 3.3. Նախքան Պայմանագրի կնքումն Ավտոտրանսպորտային միջոցի կամ Լրացուցիչ սարքավորման առկա վնասվածքները և դրանց հետևանքով առաջացած պատահարներն Ապահովագրողի կողմից ենթակա չեն հատուցման:
- 3.4. Եթե Ապահովագրական պատահարի ժամանակ վնասվում է Ավտոտրանսպորտային միջոցի այն հատվածը, որը Պայմանագրի կնքման պահին եղել է վնասված կամ հետևանք է մեկ այլ պատահարի, ապա Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելիս հաշվարկված վնասի գումարից նվազեցնում է նախապես առկա վնասվածքի չափը:
- 3.5. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ավտոտրանսպորտային միջոցի նախապես առկա վնասվածքն Ապահովադրի կողմից վերացվում է և Ապահովադրին այդ մասին տեղեկանում է Ապահովագրողին, ապա Ապահովագրողը գնում է Ավտոտրանսպորտային միջոցը՝ կազմելով գնման ակտ: Պայմանագրի հետագա գործողության ընթացքում Ապահովագրական պատահարի արդյունքում Ավտոտրանսպորտային միջոցի այն հատվածի վնասվածքը, որը նախկինում նշվել է որպես առկա և վերացվել է, ենթակա է հատուցման:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- 4.1. Ապահովագրական պատահար է համարվում Ավտոտրանսպորտային միջոցի վնասը, կորուստը կամ ոչնչացումը հետևյալ իրադարձությունների արդյունքում.



4.1.1. *Ֆիզիկական վնաս, որն իր մեջ ներառում է.*

4.1.1.1. վթար (ՃՏՊ՝ ճանապարհատրանսպորտային պատահար)՝ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման/շահագործման ընթացքում տեղի ունեցած դեպք, այդ թվում այլ տրանսպորտային միջոցի, անշարժ կամ շարժական առարկաների, կառույցների, արգելքների հետ բախվելը, վրաերթի ենթարկելը, շրջվելը, բարձրությունից անկումը,

4.1.1.2. բնական աղետներ (բացառությամբ՝ երկրաշարժ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով)՝ բնության ազդեցությունն Ավտոտրանսպորտային միջոցի վրա (կայծակի հարված, ջրհեղեղ, կարկուտ, փոթորիկ, մրրիկ, ուժգին քամի, տայֆուն, հեղեղում, տվյալ տեղանքին ոչ հատուկ մթնոլորտային տեղումներ, սողանք, փլվածք, սելավ և այլն),

4.1.1.3. կենդանիների կողմից հասցված վնաս կամ կորուստ,

4.1.1.4. թռչող սարքավորումների (ներառյալ՝ դրանց բեկորների և (կամ) մասերի) կամ այլ առարկաների, այդ թվում՝ ծառերի, քարերի, բեկորների, ձյան կամ սառույցի վայր ընկնելու հետևանքով հասցված վնաս կամ կորուստ,

4.1.1.5. Ավտոտրանսպորտային միջոցի՝ ջրի մեջ մտնելու կամ ջուրն ընկնելու հետևանքով առաջացած վնաս կամ կորուստ,

4.1.1.6. հրդեհ, պայթյուն կամ ինքնաբռնկում:

4.1.2. *Երրորդ անձանց գործողություններ, որն իր մեջ ներառում է.*

4.1.2.1. երրորդ անձանց գործողությունների իրագործման կամ իրագործման փորձի արդյունքում, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրումով Ավտոտրանսպորտային միջոցին հասցված վնասներ, հրկիզում կամ պայթեցում,

4.1.2.2. երրորդ անձանց կողմից Ավտոտրանսպորտային միջոցի անզուգույթյամբ վնասում կամ ոչնչացում,

4.1.2.3. երրորդ անձանց գործողությունների հետևանքով առաջացած Ավտոտրանսպորտային միջոցի կորուստ:

4.1.3. *Ավտոտրանսպորտային միջոցի հափշտակություն, որն իր մեջ ներառում է.*

4.1.3.1. Ավտոտրանսպորտային միջոցի կամ նրա մասերի գողություն,

4.1.3.2. Ավտոտրանսպորտային միջոցի կամ նրա մասերի կողոպուտ,

4.1.3.3. Ավտոտրանսպորտային միջոցի վնասում՝ գողության կամ կողոպուտի փորձի կամ դրանց իրագործման հետևանքով,

4.1.3.4. ապօրինաբար տիրանալն առանց հափշտակության նպատակի, եթե այդ դիսկը ներառված է Պայմանագրում,

4.1.3.5. ավագակություն, եթե այդ դիսկը ներառված է Պայմանագրում:

ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրական պատահար չի հանդիսանում և Ապահովագրողը չի հատուցում.

5.1.1. Ավտոտրանսպորտային միջոցի՝ փորձարկման, մրցավազքին կամ այլ մրցումներին մասնակցելու հետևանքով առաջացած վնասվածքը,

5.1.2. ուսուցման նպատակով Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման/շահագործման ժամանակ առաջացած վնասը,



- 5.1.3. Լրացուցիչ սարքավորման ֆիզիկական վնասը, կորուստը, հափշտակությունը, ինչպես նաև այդ սարքավորումների խափանման, անսարքության, ոչ պատշաճ օգտագործման հետևանքով առաջացած վնասները և կորուստները,
- 5.1.4. պետական մարմինների կարգադրությամբ Ավտոտրանսպորտային միջոցն առգրավելու, բռնագրավելու, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու կամ այն ոչնչացնելու հետևանքով, ինչպես նաև դրանց ընթացքում առաջացած վնասները,
- 5.1.5. Ավտոտրանսպորտային միջոցի՝ առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների վերանորոգման ծախսերը, եթե Ապահովագրողը հնարավորություն չի ունենում պարզելու Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի չափը,
- 5.1.6. Ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգումից հետո վերջինիս Ապահովագրական արժեքի նվազման ծախսերը, այդ թվում՝ ապրանքային տեսքի կորուստը,
- 5.1.7. Ավտոտրանսպորտային միջոցի միայն հաշվառման համարանիշի, անիվների դեկորատիվ ծածկերի, անվահեծերի, ֆիրմային ցուցանշանների վնասը կամ կորուստը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ավտոտրանսպորտային միջոցին այլ վնասներ չեն պատճառվել և որոնք հետևանք են Ապահովագրական պատահարի:
- 5.2. Ապահովագրական պատահար չի համարվում Ավտոտրանսպորտային միջոցի վնասը, կորուստը կամ ոչնչացումը, որը տեղի է ունեցել հետևյալի արդյունքում.
- խարդախության (խաբեության, վստահությունը չարաշահելու) եղանակով Ավտոտրանսպորտային միջոցի հափշտակման,
 - յուրացման կամ շորթման,
 - երրորդ անձի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի պահպանության կամ պաշտպանության պարտականության անփույթ կամ անբարեխիղճ կատարման:
- 5.3. Պայմանների համաձայն Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի տրամադրում այն պատահարների դեպքում, որոնք տեղի են ունեցել կամ հետևանք են՝
- 5.3.1. ավտոճանապարհների ծածկի անհարթությունների (այդ թվում՝ արագությունը նվազեցնող արգելանքների, բաց դիտահորերի) կամ փոսերի,
- 5.3.2. Ավտոտրանսպորտային միջոցի առկա վնասվածքները չվերանորոգելու և այդպիսի վիճակում այն շահագործելու, ինչպես նաև սահմանված կարգով տեխնիկական շահագործման պայմանների կամ կարգերի խախտման,
- 5.3.3. Ավտոտրանսպորտային միջոցի շարժիչը միացրած և առանց հսկողության թողնելու,
- 5.3.4. Ավտոտրանսպորտային միջոցի՝ Պայմանագրում նշված շահագործման նպատակից տարբերվող այլ նպատակով շահագործելու,
- 5.3.5. Ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք չունեցող վարորդի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման և (կամ) օգտագործման ժամանակ,
- 5.3.6. Լիազորված տիրապետողի կողմից առանց իր վարորդական վկայականում նշված պարագաների կիրառման Ավտոտրանսպորտային միջոցը վարելու ժամանակ,
- 5.3.7. Լիազորված տիրապետողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի կեղծ հաշվառման վկայագրով կամ կեղծ վարորդական իրավունքի վկայականով Ավտոտրանսպորտային միջոցը վարելու ժամանակ,
- 5.3.8. Լիազորված տիրապետողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցը կեղծ, փոխված հաշվառման համարանիշով կամ առանց դրա վարելու ժամանակ,
- 5.3.9. Ավտոտրանսպորտային միջոցի՝ անօրինական վերասարքավորման,



- 5.3.10. Լիազորված տիրապետողի աչքի կամ վերին կամ ստորին վերջույթի, դաստակի կամ ոտնաթաթի բացակայության, շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտումների, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումների և արատների առկայության, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման, բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերի:
- 5.3.11. Ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի և կահավորվածության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկին չհամապատասխանելուն,
- 5.3.12. Միջատների, կրծողների և սողունների,
- 5.3.13. Լիազորված տիրապետողի և (կամ) ուղևոր(ներ)ի կողմից սրահում ծխելու,
- 5.3.14. ոչ Լիազորված տիրապետողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման և (կամ) օգտագործման,
- 5.3.15. Լիազորված տիրապետողի կողմից ակոնոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործումից հետո Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման: Եթե Լիազորված տիրապետողը կատարել է այնպիսի գործողություններ, որով Ապահովագրողին զրկել է իր՝ ակոնոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի ազդեցության տակ գտնվելու վերաբերյալ համապատասխան փորձաքննություն անցկացնելու հնարավորությունից կամ նման փորձաքննության անցկացումն այդ գործողության հետևանքով դարձել է անիմաստ, ապա Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել հատուցման իրականացումից:
- 5.3.16. Ապահովադրի, Լիազորված տիրապետողի, Շահառուի, Ավտոտրանսպորտային միջոցի ուղևոր(ներ)ի կողմից կանխամտածված, դիտավորյալ, այդ թվում անօրինական գործողությունների կատարման կամ անգործության, որոնք պատճառ են հանդիսացել Ապահովագրական պատահարի առաջացման,
- 5.3.17. Ավտոտրանսպորտային միջոցը հակաօրինական գործողություններ կատարելու նպատակով Լիազորված տիրապետողի կողմից շահագործման կամ օգտագործման,
- 5.3.18. Ավտոտրանսպորտային միջոցի շարժիչը տաքացնելու համար կրակի աղբյուրների օգտագործման,
- 5.3.19. Ավտոտրանսպորտային միջոցում կամ դրա վրա գտնվող թունավոր կամ պայթուցիկ նյութերի՝ բացառությամբ Ավտոտրանսպորտային միջոցի բնականոն աշխատանքը ապահովող նյութերի, որոնք լցված են Ավտոտրանսպորտային միջոցի մաս կազմող և տվյալ նյութի համար նախատեսված տարայում,
- 5.3.20. Ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված թույլատրելի քանակից և (կամ) քաշից ավելի բեռի և (կամ) ուղևորի տեղափոխման,
- 5.3.21. Ապահովադրի, Շահառուի կամ Լիազորված տիրապետողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար,
- 5.3.22. Ապահովագրական պատահարի առաջացման պատճառների և հանգամանքների, ինչպես նաև Ապահովագրական պատահարի առաջացման հետ առնչություն ունեցող անձանց մասին Ապահովադրի, Շահառուի կամ Լիազորված տիրապետողի կողմից կեղծ կամ ոչ հավաստի տեղեկությունների տրամադրման,
- 5.3.23. Ավտոտրանսպորտային միջոցը ոչ վարելով տեղափոխման ժամանակ (որպես բեռ փոխադրելու, քարշակելու և այլն),



- 5.3.24. Ավտոտրանսպորտային միջոցի վրա կամ մեջ բեռի (իրերի, առարկաների և այլն) տեղադրման կամ Ավտոտրանսպորտային միջոցից բեռի հանման (բեռնաթափման) ընթացքում կատարվող գործողությունների,
- 5.3.25. Ավտոտրանսպորտային միջոցի մեջ կամ դրա վրա գտնվող գույքի ոչ պատշաճ կերպով ամրացված լինելու,
- 5.3.26. Պայմանագրում նշված Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած պատահարի,
- 5.3.27. Ավտոտրանսպորտային միջոցի մասերի, ագրեթգատների անսարքության, որն առաջացել է Ավտոտրանսպորտային միջոցի բնականոն օգտագործման (շահագործման) կամ ագրեթգատների մեջ այլ առարկաներ կամ նյութեր ընկնելու/ներթափանցելու պատճառով, եթե դա չի հանդիսանում Ապահովագրական պատահարի հետևանք,
- 5.3.28. Ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման, դրա վրա կամ դրա մեջ ավտոպահեստամասերի, բաղադրամասերի, սարքավորումների, Լրացուցիչ սարքավորումների տեղադրման ժամանակ և (կամ) դրա հետևանքով պատճառված վնասի,
- 5.3.29. Ապահովադրի, Շահառուի, Լիազորված տիրապետողի և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցի ուղևորների կրած բարոյական, ֆինանսական և այլ կապակցված վնասների և (կամ) կորուստների՝ կորցրած/չվաստակած եկամուտ, տուժանք՝ տույժեր և տուգանքներ, պարտադիր վճարումներ, ցանկացած պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման, չկատարման և (կամ) թերի կատարման հետևանքով առաջացած ծախսեր,
- 5.3.30. Ավտոտրանսպորտային միջոցի կորստի կամ վնասի, երբ Ապահովադիրը, Շահառուն կամ Լիազորված տիրապետողը չի կատարել կամ թերի է կատարել ապահովագրական ռիսկը նվազեցնելու կամ ապահովագրական ռիսկի մեծացումը կանխելու իր պարտականությունը (այդ թվում՝ վթարային լուսարձակների միացում, զգուշացնող վահանակի տեղադրում և այլն՝ բացառությամբ, եթե դա հնարավոր չի եղել իրականացնել օբյեկտիվ պատճառներով, ինչպես նաև Ավտոտրանսպորտային միջոցն անտերության մատնված, առանց հսկողության կամ բնակավայրերից դուրս, Ավտոտրանսպորտային միջոցի դռներն առանց փակելու որևէ վայրում, անձանոթ անձանց տիրապետման/հսկողության տակ կամ Ավտոտրանսպորտային միջոցը բանալիներով թողնելը), որը հանգեցրել է Ապահովագրական պատահարի առաջացմանը,
- 5.3.31. Ավտոտրանսպորտային միջոցի բանալու միջոցով հափշտակության,
- 5.3.32. ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմի,
- 5.3.33. պատերազմների, ապստամբությունների, ժողովրդական հուզումների, ներխուժումների, հեղափոխությունների կամ ահաբեկչության,
- 5.3.34. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության,
- 5.3.35. ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված այլ դեպքերի:
- 5.4. Ապահովագրողը պատասխանատու չէ Ավտոտրանսպորտային միջոցով տեղափոխվող Ապահովադրի, Շահառուի, ուղևորի կամ Լիազորված տիրապետողի սեփականությունը հանդիսացող կամ վերջիններիս տնօրինման կամ հսկողության տակ գտնվող ունեցվածքի կորստի կամ վնասի համար:
- 5.5. Ապահովագրողի կողմից չեն հատուցվում Ավտոտրանսպորտային միջոցի բնական մաշվածությունը և հնեցումը:
- 5.6. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց, երբ Ապահովագրողին Ապահովադրի կամ Լիազորված տիրապետողի մեղքով հայտնի չեն դառնում պատահարի հետ կապված իրեն անհրաժեշտ հանգամանքներն ամբողջությամբ, որոնք



հնարավորություն կտային համապատասխան որոշում կայացնել ապահովագրական հատուցման իրականացման վերաբերյալ:

- 5.7. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց, երբ Ապահովադրի կողմից Պայմաններում նշված պարտավորությունները սահմանված կարգով կամ ժամկետներում չեն կատարվել կամ Ապահովադիրը չի իրականացրել հնարավոր բոլոր գործողություններն Ավտոտրանսպորտային միջոցին վնասը պատճառած անձի ինքնություն պարզելու ուղղությամբ:
- 5.8. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում վճարելուց, եթե Ապահովադրի (Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Ապահովագրողին չեն ներկայացվում ապահովագրական պահանջի կարգավորման համար սույն Պայմաններով սահմանված փաստաթղթերը: Սույն կետի բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը և (կամ) Շահառուն պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին նշված կարգով անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը կամ Ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ Շահառուի կամ Լիազորված տիրապետողի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով: Ապահովադիրը և (կամ) Շահառուն կրում է Ապահովագրողին նրանց կողմից պահանջվող փաստաթղթերի ներկայացման անհնարինության ապացուցման պարտականությունը: Սույն կետով նախատեսված պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը և (կամ) Շահառուն պարտավոր են անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) պահանջվող փաստաթղթերը ներկայացնել Ապահովագրողին:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 6.1. Ապահովագրական գումարը սահմանվում է Պայմանագրով, որը չի կարող գերազանցել Պայմանագրի կնքման պահին Ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրական արժեքը: Եթե Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը գերազանցում է Ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրական արժեքը, ապա Պայմանագիրն Ապահովագրական արժեքը գերազանցող գումարի մասով առոչինչ է: Սույն կետում նշված Ապահովագրական գումարի նկատմամբ պահանջները կիրառվում են նաև համաապահովագրության դեպքում:
- 6.2. Եթե Ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրված է ոչ լրիվ արժեքով կամ, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել Ավտոտրանսպորտային միջոցի արժեքի աճ, Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ Ապահովագրավճար վճարելու միջոցով մեծացնել Ապահովագրական գումարը: Տվյալ դեպքում Ապահովադրի և Ապահովագրողի (այսուհետ` նաև Կողմեր) միջև կնքվում է լրացուցիչ համաձայնագիր, որը Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում:
- 6.3. Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողն իրականացրել է ապահովագրական հատուցում, ապա Ապահովագրական գումարը նվազում է կատարված ապահովագրական հատուցման չափով: Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին Ապահովագրական գումարի չափը ավելացնելու պահանջով (այն չի կարող գերազանցել Ապահովագրական արժեքը), որն իրականացվում է Պայմանագրի մնացած ժամկետի համար լրացուցիչ Ապահովագրավճար վճարելու և լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԶՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ



- 7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից, ինչպես նաև ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:
- 7.2. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել միանվագ (միանգամյա վճարումով) կամ մաս-մաս՝ Պայմանագրով սահմանված կարգով:
- 7.3. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է վճարվել կանխիկ եղանակով Ապահովագրողի դրամարկղ, ապահովագրական միջնորդին (գործակալին կամ բրոքերին) կամ փոխանցվել Ապահովագրողի համապատասխան բանկային հաշվին:
- 7.4. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը համաձայն սույն Պայմանների 7.6 կետի, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ Ապահովագրավճարի վճարման տարաժամկետման հնարավորություն:
- 7.5. Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովադիրն Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ: Սույն կետով սահմանված Ապահովագրողի իրավունքը գործում է մինչև Ապահովադրի կողմից Ապահովագրավճարի գծով ունեցած պարտավորության մարման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 00:00-ն:
- 7.6. Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել միանվագ կամ հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 5 (հինգ) օր հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը: Այս դեպքում Ապահովադրի կողմից Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին կամ Շահառուին տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Կողմերի համար:
- 8.4. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.
 - 8.4.1. ֆիզիկական անձ Ապահովադրի դեպքում՝ վերջինիս անձնագիրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ նաև պետական հաշվառման վկայականը,
 - 8.4.2. իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը և դրա ներդիրները,
 - 8.4.3. Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ ունեցած իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,
 - 8.4.4. Լիազորված տիրապետողի անձնագիրը, համապատասխան տրանսպորտային միջոց վարելու իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,



- 8.4.5. ապահովել Ապահովագրողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի գնումը, լուսանկարումը և գնահատումը,
- 8.4.6. տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,
- 8.4.7. այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման համար:
- 8.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագիրը երկկողմանի ստորագրելու և (կամ) կնքելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:
- 8.6. Ավտոտրանսպորտային միջոցը վերջինիս սեփականատիրոջ կողմից օտարվելու դեպքում Պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն:
- 8.7. Ապահովադիրն Ավտոտրանսպորտային միջոցն օտարելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում պետք է դադարեցնի Պայմանագիրը կամ սույն Պայմանների 8.4 կետին համապատասխան Ապահովագրողին տրամադրի Ավտոտրանսպորտային միջոցի նոր սեփականատիրոջ տվյալները կամ Պայմանագիրը փոխանցի նոր սեփականատիրոջը: Պայմանագիրը նոր սեփականատիրոջը փոխանցելու դեպքում վերջինս պարտավոր է 30 (երեսուն) օրվա ընթացքում ներկայանալ Ապահովագրողին՝ Պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով: Եթե Ավտոտրանսպորտային միջոցի օտարման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում Պայմանագրում համապատասխան փոփոխություններ չեն կատարվում, ապա Ապահովագրողի՝ Պայմանագրով և Պայմաններով սահմանված պարտականությունները դադարում են մինչև Պայմանագրում դրանց կատարումը: Ավտոտրանսպորտային միջոցի օտարման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում դրա նոր սեփականատերը համարվում է Լիազորված տիրապետող, եթե ունի Ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք և Շահառու (եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ):
- 8.8. Ավտոտրանսպորտային միջոցը ժառանգության իրավունքով այլ անձի սեփականությունը դառնալու դեպքում Պայմանագրի գործողությունը շարունակվում է ի օգուտ Ավտոտրանսպորտային միջոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ժառանգություն (սեփականություն) ընդունած ժառանգի, իսկ Ապահովադրի իրավունքներն ու պարտականություններն ամբողջ ծավալով անցնում են ժառանգին: Այս դեպքում Պայմանագրում փոփոխություններ կարող են չկատարվել:
- 8.9. Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով:
- 8.10. Ապահովագրական տարածք է համարվում Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 8.11. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարբերությունները դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 9.1. Ապահովադիրն իրավունք ունի՝
 - 9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),
 - 9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքեր կամ գործակալ) միջոցով,



- 9.1.3. Պայմանագրում նշել անձի (Շահառու), ով Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրավունք կունենա ստանալ ապահովագրական հատուցում,
- 9.1.4. Պայմանագրով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,
- 9.1.5. Պայմանագրով սահմանված Լիազորված տիրապետողների ցանկում կատարել փոփոխություններ,
- 9.1.6. Պայմանագիրը կորցնելու դեպքում՝ գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը,
- 9.1.7. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
- 9.2. Ապահովադիրը պարտավոր է՝
- 9.2.1. Պայմանագրի կնքումից առաջ ապահովել Ավտոտրանսպորտային միջոցի գննության և լուսանկարման գործընթացը,
- 9.2.2. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին ներկայացնել Ավտոտրանսպորտային միջոցի մասին ճշգրիտ, ամբողջական և մանրամասն տեղեկատվություն,
- 9.2.3. Ապահովագրողին հայտնել Ավտոտրանսպորտային միջոցի գծով առկա այլ ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի մասին,
- 9.2.4. Պայմանագրում նշված կարգով և ժամկետում վճարել Ապահովագրավճարը կամ դրա մի մասը,
- 9.2.5. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել պահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի բոլոր տեղեկությունները,
- 9.2.6. ծանոթանալ Պայմանների հետ և դրանց մասին տեղեկացնել Լիազորված տիրապետողին, Շահառուին,
- 9.2.7. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել Ավտոտրանսպորտային միջոցի գրավադրման, վարձակալության տրամադրման, թափփի, շարժիչի և հենասահքի փոփոխման, բանալիների, հեռակառավարման վահանակի, հակաառևանգման համակարգի/սարքավորման և գրանցման փաստաթղթերի կորստի, Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նշանակությունը փոխելու (տաքսի, մրցույթների մասնակցություն և այլն), Լիազորված տիրապետողների ցանկում ավելացումներ կատարելու և այլ այնպիսի հանգամանքների մասին, որոնք ուղղակիորեն կարող են ազդել ռիսկի գնահատման վրա,
- 9.2.8. ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելուց հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել նաև ապահովագրական պահանջի կարգավորման համար սույն Պայմաններով սահմանված փաստաթղթերը,
- 9.2.9. Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված և այնուհետև վերանորոգված և (կամ) վերականգնված Ավտոտրանսպորտային միջոցը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, Ապահովագրողի պահանջով, ներկայացնել գնման:
- 9.3. Ապահովագրողն իրավունք ունի՝
- 9.3.1. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,
- 9.3.2. Պայմանագրի կնքման փուլում գննել և լուսանկարել Ավտոտրանսպորտային միջոցը,
- 9.3.3. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,
- 9.3.4. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և Պայմանների կատարումը,
- 9.3.5. պահանջել Ապահովագրավճարի՝ ժամանակին և պատշաճ կերպով վճարումը,
- 9.3.6. Ապահովագրական ռիսկի գնահատման և Ավտոտրանսպորտային միջոցի առկա վնասվածքները գրանցելու նպատակով ուսումնասիրել և լուսանկարել Ավտոտրանսպորտային միջոցը և վնասի գնահատման ժամանակ հիմք ընդունել այդ լուսանկարները,



- 9.3.7. հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին տեղի ունեցած դեպքի փաստը և պատճառները հաստատող փաստաթղթերը կամ այլ տեղեկություններ ստանալու նպատակով,
 - 9.3.8. ապահովագրական հատուցման կամ մասնակի հատուցման վերաբերյալ որոշման կայացումից հետո կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում Ապահովագրական պատահարի վերաբերյալ ստանալ հավելյալ տեղեկություն,
 - 9.3.9. իրականացնել կամ պատվիրակել փորձաքննություն վնասի առաջացման պատճառների բացահայտման, առաջացած վնասի չափի որոշման և այլնի ուղղությամբ,
 - 9.3.10. մերժել հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով,
 - 9.3.11. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի հետ,
 - 9.3.12. պահանջել Պայմանագրի դադարեցում կամ Պայմանագրի դրույթների փոփոխություն, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացում,
 - 9.3.13. մերժել ապահովագրական հատուցման իրականացումը, եթե Ապահովադիրը, Շահառուն և (կամ) Լիազորված տիրապետողը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները:
- 9.4. Ապահովագրողը պարտավոր է՝
- 9.4.1. Ապահովադիրին ծանոթացնել Պայմանների հետ և տրամադրել Պայմանների մեկ օրինակը,
 - 9.4.2. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում,
 - 9.4.3. հատուցել Ապահովագրողի ցուցումներին համապատասխան կատարված Ապահովադիրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են Ապահովագրական պատահարի արդյունքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով:
- 9.5. Կողմերը պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՉԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- 10.1. Պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և (կամ) Շահառուն և (կամ) Լիազորված տիրապետողը պարտավոր է.
- 10.1.1. Ապահովագրական պատահարի մասին անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) Պայմանագրում/անհատական քարտում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում



վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու դեպքում Ապահովագրողը իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը կամ Շահառուն ապացուցում են դրա անհնարինությունը:

- 10.1.2. Ապահովագրական պատահարի մասին անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) հայտնել համապատասխան իրավասու մարմնին (Ոստիկանություն, հրշեջ ծառայություն և այլն) և ստանալ համապատասխան փաստաթղթեր՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադիրին, Շահառուին կամ Լիազորված տիրապետողին համապատասխան գրավոր փաստաթղթով ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց,
 - 10.1.3. Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասի կանխման կամ նվազեցման ուղղությամբ՝ հետևելով Ապահովագրողի ցուցումներին,
 - 10.1.4. դեպքի վայրում, առանց Ապահովագրողի համաձայնության, չտեղաշարժել Ավտոտրանսպորտային միջոցը և ներկա գտնվել պատահարի գրանցման բոլոր գործընթացներին՝ կատարելով համապատասխան իրավասու մարմինների և Ապահովագրողի կողմից տրված ցուցումները և պահանջները, չլքել դեպքի վայրը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տեղաշարժերը պայմանավորված են եղել մարդկանց անվտանգությունն ապահովելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինների աշխատակիցների ցուցումներով, ՀՀ օրենսդրության պահանջները կատարելու նկատառումներով,
 - 10.1.5. հնարավորության սահմաններում իրականացնել համապատասխան գործողություններ պատահարի մասնակից այլ ավտոտրանսպորտային միջոցի տվյալները, պատահարի մասնակից մյուս կողմի և վկաների ինքնությունը (անուն, ազգանուն, հասցե, անձը հաստատող փաստաթղթի համար, հեռախոսահամար) պարզելու նպատակով,
 - 10.1.6. պատահարի առաջացման համար մեղավոր կողմից պատճառված վնասի (մի մասը կամ ամբողջությամբ) հատուցման դեպքում անմիջապես տեղեկացնել Ապահովագրողին,
 - 10.1.7. Ապահովագրողի պահանջով ներկայացնել Ապահովագրական պատահարի սխեմատիկ պատկերը,
 - 10.1.8. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պաշտպանությունը,
 - 10.1.9. պատահարը տեղի ունենալուց հետո առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության չսկսել Ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման աշխատանքները,
 - 10.1.10. Ապահովագրական պատահարի դեպքում՝ Ավտոտրանսպորտային միջոցի Լիազորված տիրապետողը դրա տեղի ունենալու պահից 24 (քսանչորս) ժամվա ընթացքում պարտավոր է չօգտագործել ոգելից խմիչք և Ապահովագրողի պահանջով՝ վերջինիս հաշվին, անցնել իրավասու պետական մարմնի կողմից անցկացվող սթափության վիճակի զննություն, նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս պատահարի տեղի ունենալուց հետո անցել է նման զննություն:
- 10.2. Պատահարի մասին տեղեկանալուց հետո Ապահովագրողը պարտավոր է.
- 10.2.1. ժամանել դեպքի վայր ոչ ուշ, քան պատահարի մասին տեղեկանալուց՝ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մարզկենտրոններում 35 (երեսունհինգ) րոպեի, իսկ դրանցից դուրս՝ 80 (ութսուն) րոպեի ընթացքում՝ բացառությամբ, եթե պատահարի մասին տեղեկացնողին հայտնել է պատահարի վայր չժամանելու իր որոշման մասին,
 - 10.2.2. պատահարի վայր ժամանելու դեպքում՝ աձանագրել պատահարը,



10.2.3. հնարավորության դեպքում դեպքի վայրում Լիազորված տիրապետողից ստանալ դեպքի գրավոր նկարագիրը, դեպքի վայրում զննել և ուսումնասիրել պատահարի հետևանքով վնասված Ավտոտրանսպորտային միջոցը:

ԲԱԺԻՆ 11. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- 11.1. Ապահովագրական հատուցումը Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադիրին կամ Շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով: Ապահովագրական հատուցումը կարող է վճարվել Ապահովադիրին կամ Շահառուին՝ ՀՀ դրամով (վերջիններիս համաձայնությամբ՝ նաև համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը), բայց ոչ ավել, քան Պայմանագրով նախատեսված Ապահովագրական գումարը, բացառությամբ Ապահովագրողի ցուցումներին համապատասխան կատարված Ապահովադիրի՝ Ապահովագրական պատահարի արդյունքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով կատարված ծախսերը:
- 11.2. Ապահովադիրը կամ Շահառուն ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրողին պարտավոր է ներկայացնել ստորև նշված փաստաթղթերի բնօրինակները՝ բացառությամբ 11.2.7 կետով սահմանված փաստաթղթի (ներկայացվում է պատճենը).
 - 11.2.1. ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ գրավոր դիմում,
 - 11.2.2. Պայմանագիրը (Ապահովագրողի պահանջով),
 - 11.2.3. ֆիզիկական անձ Ապահովադիրի դեպքում՝ վերջինիս անձնագիրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ նաև պետական հաշվառման վկայականը,
 - 11.2.4. իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը և դրա ներդիրները,
 - 11.2.5. Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող համապատասխան փաստաթղթերը,
 - 11.2.6. դեպքի պահին Ավտոտրանսպորտային միջոցը վարող անձի վարորդական վկայականը և անձնագիրը,
 - 11.2.7. դեպքի պահին Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի կողմից ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործման հանգամանքը հաստատող կամ հերքող համապատասխան լիազորված մարմնի կողմից տրված փաստաթուղթը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրողի ներկայացուցիչը պարզել է տվյալ անձի կողմից ալկոհոլի, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործման հանգամանքը կամ ազատել է տվյալ անձին սույն ենթակետում նշված պարտականությունը կատարելուց՝ վերջինիս տրամադրելով համապատասխան փաստաթուղթ,
 - 11.2.8. Ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի համար պատասխանատու անձի առկայության դեպքում՝ վերջինիս վավերապայմանները և տեղի ունեցած պատահարին մասնակից տրանսպորտային միջոցի իրեն հայտնի տվյալները (հաշվառման համարանիշը, ավտոմեքենայի մակնիշը, գույնը և այլն),
 - 11.2.9. դեպքի վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված անհրաժեշտ փաստաթղթերը՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն անձամբ հնարավորություն ունի պարզելու պատահարի տեղի ունենալու հանգամանքները և Ապահովադիրին (Շահառուին) ազատել է նշված պարտականությունից:
- 11.3. Ելնելով դեպքի հանգամանքներից՝ սույն Պայմանների 11.2 կետում նշված փաստաթղթերի ցանկը Ապահովագրողի կողմից կարող է փոփոխվել:



- 11.4. Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված տիրապետողը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:
- 11.5. Ավտոտրանսպորտային միջոցի կամ ավտոպահեստամասի հափշտակության կամ ապահովագրական այն պատահարի դեպքում, երբ հարուցվել է քրեական գործ, Ապահովադիրը (Շահառուն), բացի Պայմանների 11.2 կետում նշված փաստաթղթերից, պարտավոր է ներկայացնել նաև.
- 11.5.1. հափշտակության փաստը հավաստող փաստաթուղթը,
11.5.2. քրեական գործ հարուցելու մասին որոշումը, իսկ Պայմաններով նախատեսված դեպքերում նաև քրեական գործի ավարտի կամ կասեցման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը,
11.5.3. Ավտոտրանսպորտային միջոցի շարժիչը գործի զգելու բոլոր բանալի(ներ)ը, հեռակառավարման և հակաառևանգման վահանակ(ներ)ը (սույն կետով սահմանված պահանջը վերաբերում է միայն հափշտակության դեպքին):
- 11.6. Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի առաջացման պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:
- 11.7. Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է ամիջապես ներկայացնի Ապահովագրողին:
- 11.8. Ապահովագրողն իրավունք ունի իրավասու պետական մարմիններից կամ պատահարի առաջացման հանգամանքներին ծանոթ այլ անձանցից ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև հավաքագրել Ապահովագրական պատահարի հետ կապված տվյալներ:
- 11.9. Որպես ապահովագրական հատուցման վճարման պայման՝ Ապահովադիրը (Շահառուն) չպետք է ստանձնի տվյալ պատահարի հետ կապված որևէ պարտավորություն, չպետք է կատարի որևէ առաջարկ, խոստում կամ վճարում կամ կատարի իրավաբանական բնույթ կրող որևէ ծախս՝ առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության, ինչպես նաև չպետք է գործի ի վնաս Ապահովագրողի շահերի և Ապահովագրողին պետք է տրամադրի վերջինիս կողմից պահանջվող համապատասխան օժանդակություն:
- 11.10. Մինչև Ապահովագրողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցը գողության պատճառով կորած համարել, դրա կորուստը պետք է հաստատվի իրավասու պետական մարմնի կողմից տրված համապատասխան փաստաթղթով:
- 11.11. Հափշտակված Ավտոտրանսպորտային միջոցի հայտնաբերման դեպքում Ապահովադիրը, Շահառուն կամ Լիազորված տիրապետողը պարտավոր է այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո 24 (քսանչորս) ժամվա ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին, հակառակ դեպքում Ապահովագրողը կարող է հրաժարվել ապահովագրական հատուցում իրականացնելուց կամ հետ պահանջել արդեն իսկ վճարված ապահովագրական հատուցումը:
- 11.12. Հափշտակության ռիսկի գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի և Ապահովադիրի (Շահառուի) միջև համապատասխան համաձայնագիր կնքելուց հետո, որտեղ նշվում է Ապահովադիրի՝ Ավտոտրանսպորտային միջոցի հայտնաբերման դեպքում Ապահովագրողին անմիջապես տեղեկացնելու և 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ստացված ապահովագրական հատուցումը հետ վերադարձնելու պարտականությունը:
- 11.13. Այն դեպքում, երբ Ավտոտրանսպորտային միջոցը հայտնաբերվել է մինչև ապահովագրական հատուցման վճարումը, Ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասը դիտարկվում է որպես երրորդ անձանց անօրինական գործողություն:



- 11.14. Ապահովագրողն իր ընտրությամբ կարող է վերանորոգել, փոխարինել Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրամական տեսքով հատուցել վերջինիս կորուստը կամ վնասը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 11.15. Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վերանորոգման ծախսերը ներառում են օգտագործվող պահեստամասերի, նյութերի և աշխատանքների արժեքները:
- 11.16. Ապահովագրողի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի հափշտակության, կորստի կամ վնասի դեպքում հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հափշտակության, կորստի կամ վնասի առաջացման պահին Ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրական արժեքը, բայց ոչ ավել, քան Ավտոտրանսպորտային միջոցի՝ Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը՝ դրանից նվազեցնելով Պայմանագրով սահմանված Չհատուցվող գումարը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 11.17. Եթե Ավտոտրանսպորտային միջոցի վնասի կամ կորստի չափը գերազանցում է Պայմանագրով սահմանված Ապահովագրական գումարը, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս հիմք է ընդունվում Պայմանագրով սահմանված Ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրական գումարը՝ դրանից նվազեցնելով Պայմանագրով սահմանված Չհատուցվող գումարը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 11.18. Ապահովագրողը հատուցում է Ապահովագրական պատահարի հետևանքով վնասված Ավտոտրանսպորտային միջոցի՝ դեպքի վայրից քարշակով տեղափոխման ծախսը (եթե այն հնարավոր չէ տեղաշարժել վարելու միջոցով)՝ հետևյալ սահմանաչափերով՝ Երևան քաղաքում տեղափոխման համար հատուցվող գումարը չի կարող գերազանցել 10.000 ՀՀ դրամը, իսկ Երևան քաղաքից դուրս տեղափոխման համար՝ 30.000 ՀՀ դրամը:
- 11.19. Եթե Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի է ունեցել Ավտոտրանսպորտային միջոցի ամբողջական կորուստ՝ այսինքն Ավտոտրանսպորտային միջոցը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի կամ Ավտոտրանսպորտային միջոցի վերականգնողական արժեքը կազմում է վերջինիս Ապահովագրական արժեքի 80% և ավելի, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ Ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրական արժեքի չափով՝ հատուցման ենթակա գումարից նվազեցնելով մնացորդային արժեքը և Չհատուցվող գումարը: Այս դեպքում Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պահպանում է Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը:
- 11.20. Ավտոտրանսպորտային միջոցի՝ լրիվ արժեքով ապահովագրված լինելու դեպքում Ապահովագրողն Ավտոտրանսպորտային միջոցի ամբողջական կորստի դեպքում Ապահովադրին (Շահառուին) վճարում է ապահովագրական հատուցում Ապահովագրական գումարի չափով, իսկ Ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի դեպքում՝ փաստացի վնասի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրական գումարի չափը՝ դրանից նվազեցնելով Պայմանագրով սահմանված Չհատուցվող գումարը:
- 11.21. Ավտոտրանսպորտային միջոցի՝ ոչ լրիվ արժեքով ապահովագրված լինելու դեպքում Ապահովագրողն իրականացնում է վնասի հատուցումն այն համամասնությամբ, որը գոյություն ունի Ավտոտրանսպորտային միջոցի Ապահովագրական գումարի և Ապահովագրական արժեքի միջև՝ նվազացնելով Չհատուցվող գումարը՝ բացառությամբ Պայմանագրով նախատեսված դեպքերի:
- 11.22. Երբ Ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրված է Ապահովագրական արժեքի ամբողջ չափով և Ապահովագրական պատահարի (բացառությամբ գողության, հափշտակության դեպքի) առաջացման մեջ Ապահովադրի (Լիազորված տիրապետողի) մեղավորությունն ամբողջապես բացակայում է, այսինքն՝ երրորդ անձի կամ անձանց ամբողջական մեղավորության դեպքում, Ապահովագրողն ապահովագրական հատուցում իրականացնելիս չի կիրառում Պայմանագրով սահմանված



չհատուցվող գումարը՝ պայմանով, որ Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված տիրապետողը) տեղի ունեցած պատահարում մեղավոր բացահայտված երրորդ անձի կողմից պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունքը պատշաճ կերպով կփոխանցի Ապահովագրողին և Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված տիրապետողը) չի խոչընդոտի կամ որևէ կերպ անհնարին չի դարձնի Ապահովագրողի կողմից այդ իրավունքի իրականացումը:

11.23. Եթե տեղի է ունեցել Ավտոտրանսպորտային միջոցի մասնակի վնաս կամ կորուստ, ապա Ապահովագրողը վնասը հաշվարկում է տվյալ ավտոպահեստամասի գործարանային արժեքից հիմնվելով Աղյուսակ 1-ում ներառված համապատասխան գործակիցների վրա:

Աղյուսակ 1

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՇՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ			
Վազք (կմ)	Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը (տարի)		
	0 - 2	2 - 5	5-ից ավելի
0 - 100.000	0	3-րդ տարում կիրառվում է 3%, իսկ ամեն հաջորդող տարում ավելանում է 3-ական տոկոսով	6-րդ տարում կիրառվում է 13%, իսկ ամեն հաջորդող տարում ավելանում է 5-ական տոկոսով
100.001-ից ավելի	4%	Կիրառվում են վերոնշյալ տոկոսները՝ դրանց ավելացնելով 1.5 գործակից (անգամ 1.5)	

11.24. Եթե Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը գերազանցում է 5 տարին և վազքը՝ 100.000կմ-ից ավելի է, ապա Ապահովագրողը վնասի հաշվարկն իրականացնելիս առաջնահերթությունը տալիս է երկրորդային շուկայում ձևավորված ոչ գործարանային արտադրության նոր կամ գործարանային արտադրության օգտագործված ավտոպահեստամասերի արժեքին: Եթե երկրորդային շուկայում տվյալ ավտոպահեստամասը բացակայում է, ապա Ապահովադիրն (Շահառուին) վնասի հաշվարկն իրականացնում է գործարանային նոր ավտոպահեստամասի արժեքի նկատմամբ Աղյուսակ 1-ում նշված գործակիցների կիրառմամբ:

11.25. Եթե Պայմանների համաձայն ապահովագրական հատուցման պահանջի ժամանակ գոյություն ունի այլ ապահովագրության պայմանագիր/վկայագիր (կրկնակի ապահովագրություն), որով հատուցվում է Ավտոտրանսպորտային միջոցի նույն կորուստը կամ վնասը, ապա Ապահովագրողը յուրաքանչյուր կորստի, վնասի կամ ծախսի համար հատուցում է իր համամասնական բաժինը:

11.26. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և սույն Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:



- 11.27. Ապահովագրողը, Ապահովադրի (Շահառուի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Շահառուին):
- 11.28. Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:
- 11.29. Ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավոր է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցման վճարումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

- 12.1. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է.
 - 12.1.1. եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
 - 12.1.2. եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները,
 - 12.1.3. ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 12.2. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին վերադարձվում է Ապահովագրավճարն ամբողջությամբ՝ բացառությամբ Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված դեպքերի:
- 12.3. Ապահովադրի կողմից ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով Ապահովագրողը վաղաժամկետ լուծում է Պայմանագիրը և Ապահովադրին վերադարձնում Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 75 (յոթանասունհինգ) տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 75 (յոթանասունհինգ) տոկոս / Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր:
- 12.4. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր ծանուցելով Ապահովագրողին:
- 12.5. Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում՝ Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը: Այս դեպքում Ապահովադրին վերադարձվում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետին համամասնորեն հաշվարկված Ապահովագրավճարը, որի հիմք է հանդիսանում Ապահովագրավճարի 75 (յոթանասունհինգ) տոկոսը՝ (Պայմանագրով սահմանված Ապահովագրավճար * 75 (յոթանասունհինգ) տոկոս / Պայմանագրի գործողության օրեր) * Պայմանագրի չլրացած օրեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 12.6. Այն դեպքում, երբ Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծումը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված Ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:



- 12.7. Ապահովադրի կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում վերջինիս վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար և ապահովագրական հատուցման պահանջն Ապահովագրողի կողմից դեռևս չի կարգավորվել (մինչև ապահովագրական պահանջի կարգավորումը) կամ ստացել է ապահովագրական հատուցում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 12.8. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե Կողմերից մեկը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում: Այս դեպքում վճարված Ապահովագրավճարն Ապահովադիրին ենթակա չէ վերադարձման եթե խախտումը թույլ է տվել Ապահովադիրը:
- 12.9. Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

ԲԱԺԻՆ 13. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ՍՈՒԲՐՈԳՍՅԻՍ)

- 13.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադիրին պատճառված վնասից բխող նրա (Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող Պայմանագրի պայմանն առոչինչ է:
- 13.2. Ապահովադիրը (Շահառուն, Լիազորված տիրապետողը) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:
- 13.3. Եթե Ապահովադիրը հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իր իրավունքից կամ այդ իրավունքի իրականացումը անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի, Լիազորված տիրապետողի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) վերադարձնել ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարը:

ԲԱԺԻՆ 14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 14.1. Սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում Պայմանագրի կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այն հետևանք է անհաղթահարելի ուժի, մասնավորապես՝ ջրհեղեղի, պայթյունի, հրդեհի, երկրաշարժի, այլ տարերային աղետների, պատերազմի, ռազմական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ժողովրդական հուզումների, ահաբեկչության, գործադուլների, արտակարգ դրության, տնտեսական շրջափակման, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցման, կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելանքների կամ նման այլ իրադարձությունների:
- 14.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը կամ դրա հետևանքները երկարաձգվում են 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով Պայմանագրի մյուս Կողմին:



14.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունների իրականացման վրա պարտավոր է ապացուցել այն Կողմը, որի պարտականությունների իրականացմանն է խոչնդոտում նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 15.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:
- 15.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: